MA-SIS

(Titre provisoire / Ժամանակավոր անվանում) ՄԱ-ՍԻՍ

Gazette des Arméniens de Lille, n° 0 Juin 2007

Préparation des décors pour la première fête de l'association *Ararat* Դահլիճի ձևավորումն « Արարատ » միության առաջին միջոցառման կապակցությամբ

Une association des Arméniens de Lille

En 2003 l'association *Ararat* a été crée par 3 étudiants de la communauté, Tatévik, Edouard et Mariam, pour soutenir une activité de danse arménienne qui se déroulait dans la maison de quartier du Faubourg de Béthune. Son objet plus large visait à promouvoir et soutenir toutes les activités réalisées par les Arméniens de Lille (danse, cours de langue arménienne, art, sport…).

Le jour de la fête de la musique de la même année, le 21 juin, le groupe de danse, au départ exclusivement composé de filles, devait montrer son savoir-faire sur scène. Quelques garçons les ont rejointes, et un véritable repas spectacle a été monté. Des costumes ont été fabriqués pour les danseurs, des décors représentant les paysages arméniens ont été peints sur toile et sont venus décorer la salle, un reportage sur le génocide a été préparé, diffusé et accompagné par une chanson et une danse en hommage aux disparus. Le tout a été accompagné d'un repas arménien. Beaucoup ont donné de leur temps et de leur compétence pour cette manifestation qui a eu lieu dans la salle « Concorde » du quartier et a eu un très grand succès. Les représentants de la maison de quartier et de la Mairie en parlent encore soulignant l'intérêt de l'association.

Après ce coup d'éclat, les danseurs se sont produits plusieurs fois au cours de manifestations de quartier pour représenter la communauté. Pour les nouveaux arrivants, l'association a également initié des cours de français assurés par Mariam et Tatevik.

En 2004, l'association a reçu la troupe de danse arménienne l'« Etoile de l'espoir » de Rostov-sur-le Don (Russie). Sur fond de musique moderne et traditionnelle, une vingtaine de jeunes danseurs de tous âges ont présenté des danses interprétant notamment des scènes de la vie quotidienne et des moments forts de l'histoire arménienne.

Enfin, en 2005, c'est le célèbre chanteur arménien Aram Asatryan, malheureusement décédé depuis, qui à l'occasion d'un passage en Belgique, est venu chanter pour les

Հայկական միություն Լիլում

2003 թվականին երեք ուսանողներ՝ Տաթևիկը, Էդուարդը և Մարիամը, ստեղծեցին «Արարատ» հայկական միությունը, որի հիմնական նպատակն էր համախմբել Լիլում բնակվող հայերին՝ իրականացնելու տարբեր միջոցառումներ (պարի, հայերենի դասընթացներ, արվեստների և սպորտի խմբակներ…) ։

Նույն տարվա հունիսի 21-ին Ֆոբուր դը Բեթյունի մշակույթի տանը կազմակերպվեց երեկույթ՝ նվիրված երաժըշտության տոնին, որի ընթացքում պարի խումբը պետք է ներկայացներ իր բեմական ունակությունները ։ Խումբն սկզբում կազմված է եղել միայն աղջիկներից, որոնց հետագայում միացել էին մի քանի տղաներ ։ Ավանդական հագուստներով նրանք միասին ցուցադրեցին մի ինքնատիպ ներկայացում ։ Դահլիճը զարդարված էր հայկական բնաշխարհը և տեսարժան վայրերը պատկերող նկարներով և պաստառներով ։ Ցուցադրվեց հայոց ցեղասպանության մասին տեսանյութ, որն ուղեկցվեց պարային և երաժշտական համարներով՝ նվիրված անմեղ զոհերի հիշատակին ։ Միջոցառումը, որը տեղի ունեցավ թաղամասի «Կոնկորդ» դահլիճում և եզրափակվեց ճաշկերույթով, մեծ հաջողության արժանացավ ։ Թե՛ քաղաքապետարանի և թե՛ մշակույթի տան ներկայացուցիչները մեծապես կարևորեցին միության դերն ու առաքելությունը ։

Հետագայում նս պարի խումբը հանդես եկավ թաղապետարանի կազմակերպած այլ միջոցառումներում՝ ներկայացնելով տեղի հայկական համայնքը ։ Նորեկների համար միությունը նաև կազմակերպեց ֆրանսերենի դասընթացներ՝ Մարիամի և Տաթևիկի ղեկավարությամբ։

2004 թ. միությունը հյուրընկալեց Դոնի Ռոստովը (Ռուսաստան) ներկայացնող « Հույսի աստղ » պարային համույթին ։ Տարբեր տարիքի շուրջ երկու տասնյակ պարողներ ավանդական և ժամանակակից երաժշտության տակ ներկայացրին հայկական կենցաղի տարրեր և պատմության մի քանի նշանակալի դրվագներ ։

Վերջապես, 2005 թ. հայտնի երգիչ Արամ Ասատրյանը, ով, ցավոք, անժամանակ հեռացավ կյանքից, Բելգիա այցե-

Lillois avec l'assistance technique d'A. Gevorguyan et le soutien logistique de S. Khatchatryan.

Puis l'association a fait une pause faute de temps pour ses gestionnaires rattrapés par leur vie familiale et professionnelle.

À l'occasion des festivités organisées pour l'Année de l'Arménie, plusieurs d'entre nous se sont rencontrés et le besoin de s'associer pour faire reconnaître et vivre la communauté est réapparu.

Différents projets sont sortis du cœur de quelques uns prêts à s'investir bénévolement : des cours d'arménien et de danse traditionnelle pour préserver la mémoire de notre communauté et en faire bénéficier nos enfants, une gazette, une page Internet, un fichier pour mieux faire circuler l'information entre nous et sur nous, des manifestations pour Pâques et Noël, des rapprochements avec des associations sœurs en Belgique et en France, un échange scolaire pour des enfants arméniens.

Notre objectif est de faire bénéficier de ces activités un maximum de personnes dans la limite de nos moyens humains.

Pour en savoir plus sur nos projets, nous connaître et vous associer, nous organiserons une soirée en automne.

Mariam et Louisette

լության ճանապարհին կանգ առավ Լիլում և համերգ տվեց լիլահայ հանդիսատեսի առջև՝ Ա. Գևորգյանի տեխնիկական և Ս. Խաչատրյանի կազմակերպչական օժանդակությամբ :

Հետո միությունն ընդհատեց իր գործունեությունը ժամանակի սղության, ընտանեկան և մասնագիտական խնդիրների պատճառով :

Ֆրանսիայում Հայաստանի տարվան նվիրված բազմաթիվ միջոցառումները մեզանից շատերին ևս մեկ անգամ առիթ տվեցին խորհելու, միավորվելու և Լիլում մի կենտրոն ստեղծելու կամ վերականգնելու մասին : Հիմնական անելիքները կապված են մեր երեխաներին հայոց լեզվի դասավանդման և հայկական ավանդական ու ժամանակակից պարերի ուսուցման հետ։ Նպատակ ունենք ստեղծել մի պարբերական, ինտերնետային էջ, հասցեների ցուցակ՝ համայնքին վերաբերվող տեղեկատվությունը շրջանառության մեջ դնելու համար, կազմակերպել միջոցառումներ՝ նվիրված Սուրբ Ծնունդին և Զատիկին, համագործակցել նմանատիպ այլ միությունների հետ, որոնք գործում են Բելգիայի և Ֆրանսիայի շատ քաղաքներում, կազմակերպել հայ դպրոցականների այցեր Լիլ :

Մեր անելիքներին ավելի մանրամասն ծանոթանալու և մեզ հետ համագործակցելու համար այս աշնանը նախատեսում ենք կազմակերպել երեկույթ :

Մարիամ և Լուիզեթ

Cours de danse arménienne — Հայկական պարի դասընթացներ

LES ANIMATIONS

Les cours de danse

Les danses traditionnelles ont une place si importante dans la culture arménienne qu'elles sont souvent apprises à l'école. Chaque région possède sa chorégraphie et ses costumes. Les danses sont mixtes, hommes et femmes, garçons et filles enchaînent les figures et les tableaux. Chaque fête publique ou privée (mariage, baptême, fête de l'indépendance, fête des femmes, de l'armée …) est l'occasion de se produire.

Dans ce contexte qu'il nous semble important de proposer à nouveau de la danse pour les enfants. Anna l'a déjà fait avec succès. Ses cours ont permis à des jeunes de se produire dans le cadre des manifestations portées par l'association *Ararat*.

Elle est prête à renouveler l'expérience avec cette fois des plus jeunes. Christina s'associera à elle.

À la demande de la maison de quartier du Faubourg de Béthune elle a démarré ses cours les mercredis et samedis après midi, dès le mois de juin pour les enfants Arméniens, mais aussi non Arméniens.

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պարի դասեր

Հայկական ավանդական պարերը մեր մշակույթի կարևոր մասն են, ուսուցանվում են դպրոցներում կամ պարի խմբակներում : Պատմական Հայաստանի ամեն մի գավառ ուներ իր ավանդական հագուստները և պարերի ոճը : Շատ պարեր համատեղ են, որոնց ժամանակ տղամարդիկ և կանայք, տղաներն ու աղջիկները աշխույժ և հեզաճկուն շարժումներով կերտում են ինքնատիպ դրվագներ : Ամեն մի մասսայական կամ ընտանեկան տոնակատարություն, լինի դա հարսանիք, կնունք, անկախությանը, կանանց կամ հայոց բանակին նվիրված տոն, հրաշալի առիթ է բոլոր հայերի համար պարելու իրենց հոգեհարազատ մեղեդիների տակ :

Մենք շատ ենք կարևորում պարի դասերի վերսկսումը, մանավանդ որ Աննան փորձառու պարուսույց է : Հենց նրա գլխավորած խումբն էր, որ մեծ հաջողությամբ ելույթ ունեցավ «Արարատ» միության կազմակերպած երեկույթի ժամանակ : Նա նորից պատրաստ է Քրիստինայի հետ վերսկսել պարապմունքները այս անգամ ավելի փոքր տարիքի երեխաների հետ :

En septembre, les cours reprendront pour une action de plus longue durée Il s'agira de travailler à fond des danses traditionnelles mais aussi des créations modernes. Si les participants sont suffisamment nombreux, deux groupes de niveau seront créés.

Le but est de pouvoir participer à des spectacles de quartier et arméniens voire d'organiser des échanges avec d'autres communautés de Belgique et de région parisienne.

Un fond de costumes sera peu à peu constitué avec l'aide, dans un premier temps, de l'atelier couture de la maison de quartier du Faubourg de Béthune.

Anna, Christina et Louisette

Ֆոբուր դը Բեթյունի մշակույթի տան առաջարկով նրանք հունիս ամսից սկսած ամեն չորեքշաբթի և շաբաթ օր անց են կացնում պարապմունքներ ինչպես հայ, այնպես էլ այլազգի երեխաների հետ :

Սեպտեմբեր ամսից նորից կսկսվեն այդ դասերը՝ ավելի երկար ժամանակով սովորեցնելով թե՛ ավանդական և թե՛ ժամանակակից պարեր։ Ցանկացողների թիվը շատ լինելու դեպքում պարողները կբաժանվեն երկու խմբի : Նպատակն է մասնակցել տարբեր միջոցառումների և կատարել փորձի փոխանակում Բելգիայում և Փարիզի շրջակայքում գործող այլ խմբերի հետ : Ֆոբուր դը Բեթյունի մշակույթի տանը գործող կարի արհեստանոցը սկզբնական շրջանում կօգնի հագուստների հարցում :

Աննա, Քրիստինա և Լուիզեթ

Les cours d'arménien

Nos enfants comprennent et parlent presque tous arménien. Mais la maîtrise de la lecture et de l'écriture est plus délicate. C'est pourquoi, dans le cadre de l'association, Haïk, Siranouche et Tamar proposent de donner des cours d'apprentissage, une fois par semaine, aux jeunes volontaires.

D'autres Arméniens dans des pays plus défavorisés ou à des époques moins favorables sont parvenus avec très peu de moyen à créer de véritables écoles qui fonctionnent encore aujourd'hui. Nous vivons aujourd'hui dans un pays qui offre toutes les possibilités à nos enfants de connaître nos valeurs par le biais de l'apprentissage de notre langue d'origine. Notre mobilisation, celles de nouveaux volontaires qui se feront connaître, et votre soutien devraient permettre d'en faire autant et peut-être d'avoir dans quelques années d'autres matières qui seront enseignées comme le catéchisme, l'histoire, etc.

Pour septembre prochain, voici ce qui est proposé :

. Pour les plus petits, la pratique de la langue et la découverte des lettres se dérouleront autour de l'apprentissage de comptines, de petits jeux de rôle et de créations d'art plastique.

Les supports pédagogiques (livres et CD/DVD) viendront des écoles maternelles d'Arménie et de leurs programmes développés en 2006 et 2007. Un petit budget de fournitures pour les travaux manuels et pour ces CD/DVD et livres sera à constituer.

. Pour les plus grands, l'écriture et la lecture seront enseignées à l'aide de manuels arméniens donnés aux enfants. Les valeurs essentielles arméniennes, les grands moments historiques, les hommes célèbres, la géographie de ce pays serviront de support à certains cours pour élargir la culture des jeunes. Il n'y aura pas de devoirs à faire à la maison, mais les parents pourront relayer et suivre les enseignements grâce au cahier de travail que les enfants ramèneront chez eux. Ils pourront également poser des questions aux enseignants.

En fonction de la progression des enfants, de petits spectacles pourront mettre en valeurs leurs acquis à l'occasion de manifestations spécifiques (fête de fin d'année, fête de l'alphabet, goûters …) ou plus globales (Noël, Pâques …).

Il sera demandé aux enfants de participer le plus régulièrement possible aux cours pour que l'apprentissage soit sérieux et par respect pour les professeurs.

Nous comptons sur les parents pour y veiller.

Une petite participation financière sera demandée aux parents pour l'acquisition des manuels donnés aux enfants et de petites fournitures de cours et de festivités.

Haïk, Siranouche et Louisette

Հայերենի դասընթացներ

Մեր երեխաների մեծ մասը հայերեն ազատ խոսում և հասկանում է : Սակայն ոչ բոլորը գրել և կարդալ գիտեն : Ելնելով այս հանգամանքից՝ Հայկը, Սիրանուշը և Թամարը միության շրջանակներում բոլոր ցանկացողներին առաջարկում են հայերենի ուսուցման դասընթացներ՝ շաբաթը մեկ անգամ հաճախականությամբ :

Տարբեր ժամանակներում և երկրներում՝ հաճախ՝ ո՛չ բարեհաջող, հայերը միշտ և ամենուր, շատ անգամ նվազագույն միջոցներով, ստեղծել են փոքրիկ կիրակնօրյա վարժարաններ, որոնց մի մասը հետագայում վերածվել են մեծ մշակութային օջախի : Մենք ապրում ենք մի երկրում, որը մեզ տալիս է բոլոր հնարավորությունները մեր երեխաներին մայրենի լեզվի միջոցով ծանոթացնելու մեր արժեքներին : Կախված մեր կամքից, այսինքն՝ նոր կամավորների մասնակցությունից և առաջարկություններից, այս դասընթացները տարեցտարի կարող են կատարելագործվել և ներառնել նոր առարկաներ՝ կրոն, պատմություն և այլն :

Սեպտեմբեր ամսից առաջարկում ենք հետևյալը՝

. 6-7 տարեկան փոքրիկները այբուբենը կսովորեն զանազան նկարների, զվարճալի մանկական խաղերի և ձեռքի աշխատանքների միջոցով :

Դասավանդման անհրաժեշտ նյութերը (գրքեր և ձայնա-/տեսասկավառակներ) կբերվեն Հայաստանի տարրական դպրոցներից : Ձեռքի աշխատանքների, գրքերի և ձայնա-/տեսասկավառակների համար պետք է նախատեսել մի փոքրիկ բյուջե :

. Ավագ տարիքի երեխաները կսովորեն գրել և կարդալ Հայաստանից բերված դասագրքերով : Ի տարբերություն հայաստանյան դպրոցների՝ տնային աշխատանքներ չեն լինելու, բայց ծնողները կարող են հետևել իրենց երեխաների առաջադիմությանը նրանց տետրերի և, իհարկե, գիտելիքների ստուգման միջոցով : Հատուկ ուշադրություն է դարձվելու ընդհանուր ճանաչողությանը՝ պատմական մեծ իրադարձություններին, հանրահայտ մարդկանց, Հայաստանի մասին աշխարհագրական տեղեկություններին և այլն…

Նախատեսում ենք կազմակերպել տարբեր հանդեսներ՝ նվիրված ուսումնական տարվա ավարտին, այբբենարանին, Սբ. Ծնունդին և Զատիկին, որոնք կուղեկցվեն հայկական խորտիկների համտեսումով :

Երեխաներից կպահանջվի բարեխղճորեն հաճախել և լրջորեն մոտենալ պարապմունքներին : Այս հարցերում մենք մեծ հույսեր ենք կապում նաև ծնողների հետ : Վերջիններին խնդրում ենք փոքրիկ ֆինանսական մասնակցություն ունենալ դասագրքերի և միջոցառումների համար անհրաժեշտ պարագաներ ձեռք բերելու գործում :

Հայկ, Սիրանուշ և Լուիզեթ

Autres animations

À la maison de quartier du Faubourg de Béthune (65 rue Saint Bernard à Lille, tél : 03.20.92.21.49) des cours de macramé ont également commencé le mercredi avec Chouchan, et de cuisine arménienne pour les jeudis après-midi du mois de juin dans le cadre de l'atelier cuisine avec Marguerite et Louise.

Այլ նախաձեռնություններ

Ֆոբուր դը Բեթյունի մշակույթի տանը (Լիլ, Սենտ Բերնարի 65, հեռ. 03.20.92.21.49) ամեն չորեքշաբթի կգործի նաև Շուշանի նախաձեռնած մաքրամեի խմբակը, իսկ հունիս ամսին՝ ամեն հինգշաբթի կեսօրից հետո Մարգարիտան և Լուիզան հրավիրում են հայկական խոհանոցի սիրահարներին՝ փոխանակելու իրենց հմտությունները :

LES MANIFESTATIONS PASSÉES

Arménie, 15 ans d'indépendance

Le 27 octobre 2006, un colloque a été organisé à l'Université de Lille 3 sur le thème de l'indépendance de l'Arménie en présence de plus de 60 personnes (étudiants, doctorants, universitaires et membres de la communauté arménienne locale) organisée par Annie Allain, professeur émérite à l'Université de Lille 3, et Garik Galstyan, maître de conférences en civilisation russe et soviétique.

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հայաստան. անկախության 15-ամյակը

2006 թվականի հոկտեմբերի 27-ին Լիլ3 համալսարանում կազմակերպվեց գիտաժողով՝ Հայաստանի անկախության թեմայի շուրջ Լիլ3 համալսարանի վաստակավոր պրոֆեսոր Աննի Ալլենի և ռուսական և սովետական քաղաքակրթության դոցենտ Գարիկ Գալստյանի ղեկավարությամբ : Ներկա էին ավելի քան 60 հոգի (ուսանողներ, ասպիրանտներ, դասախոսներ և հայ համայնքի ներկայացուցիչներ) :

C. Mouradian, H. Grigoryan, K. Atayan, G. Galstyan

Կ. Մուրադյան, Հ. Գրիգորյան, Կ. Աթայան, Գ. Գալստյան

La première demi-journée de cette manifestation universitaire a été consacrée à la situation actuelle au Haut-Karabakh dans les domaines politique et de l'enseignement, à la diaspora arménienne du Liban et à l'évolution de l'Arménie dans le processus de succession de l'URSS. Elle a été animée par l'historienne Claire Mouradian et Annie Allain. Messieurs Kamo Atayan et Hamlet Grigoryan, respectivement Ministre de l'éducation, de la culture et du sport du Haut-Karabakh et le Président de l'Université d'Artsakh (Haut-Karabakh) étaient présents et ont exposé leurs points de vue.

Օրվա առաջին կեսը նվիրված էր Լեռնային Ղարաբաղի քաղաքական և կրթական արդի իրավիճակին, լիբանանահայ համայնքին և ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով Հայաստանի անկախացման գործընթացին : Նիստը վարեցին պատմաբան Կլեր Մուրադյանը և Աննի Ալլենը : Իրենց ելույթներում գիտաժողովի մասնակիցներ, Լեռնային Ղարաբաղի մշակույթի, կրթության և սպորտի նախարար՝ պարոն Կամո Աթայանը, և Լեռնային Ղարաբաղի «Արցախ» համալսարանի ռեկտոր՝ պարոն Համլետ Գրիգորյանը տեսակետներ հայտնեցին քննարկվող հարցերի շուրջ :

La deuxième demi-journée a été animée par Garik Galstyan. Des chercheurs d'Arménie, d'Aix-en-Provence et de Clermont-Ferrand ont apporté leur contribution avec notamment des exposés sur la coopération stratégique arméno-russe comme facteur de stabilité géopolitique dans le Sud-Caucase, sur les relations difficiles entre l'Arménie et la Géorgie, sur la dispersion des Arméniens issus principalement du génocide de 1915 et sur la qualification juridique et le débat actuel sur cet événement tragique.

Cette rencontre scientifique s'est terminée par un cocktail en présence du Président de l'Université de Lille 3 Jean-Claude Dupas.

Une partie du public, des Arméniens de la communauté et les intervenants ont clôturé cette journée autour d'un sympathique barbecue.

À travers l'étude de l'environnement géopolitique de l'Arménie, cette journée a été une contribution à la meilleure compréhension des processus qui se déroulent actuellement au Sud-Caucase. L'objectif était de faire découvrir l'Arménie, sa vieille civilisation, son passé et son présent à un public le plus large possible. Les travaux de cette journée feront l'objet ultérieurement d'une publication.

Louisette et Garik

Օրվա երկրորդ կեսը վարեց Գարիկ Գալստյանը ։ Հայաստանից, Էքս-ան-Պրովանսից և Կլերմոն-Ֆերրանից ժամանած հյուրերը մասնավորապես քննարկեցին հայ-ռուսական ռազմավարական համագործակցությունը որպես աշխարհաքաղաքական կայունացման գործոն Հարավային Կովկասում, հայ-վրացական բարդ հարաբերությունները, հայկական սփյուռքի առանձնահատկությունը որպես 1915 թ. եղեռնի հետևանք, նրա իրավաբանական որակավորման և հայկական հարցի արդի քննարկումների մասին թեմաները ։

Գիտական հանդիպումն ավարտվեց նախընթրակով Լիլ3 համալսարանի ռեկտոր Ժան-Կլոդ Դյուպայի ներկայությամբ ։ Գիտաժողովի մասնակիցների մեծ մասը, ինչպես նաև տեղի հայ համայնքի շատ ներկայացուցիչներ այդ օրը եզրափակեցին գեղեցիկ խնջույքով ։

Այս հանդիպումը փորձեց յուրովի մեկնաբանել այն գործընթացները, որոնք այսօր տեղի են ունենում Հարավային Կովկասում՝ Հայաստանի աշխարհաքաղաքական իրադրության ուսումնասիրության միջոցով ։ Նրա նպատակն էր հասարակական լայն շրջանակներին հնարավորության չափ ծանոթացնել Հայաստանի, նրա բազմադարյա քաղաքակրթության, անցյալի և ներկայի հետ ։ Մոտ ապագայում գիտաժողովի ելույթները կհրատարակվեն ։

Լուիզեթ և Գարիկ

Du *Nord au Monde*, escale en Arménie

Le 18 mars dernier, l'association *Pankultura* a proposé une après-midi sur l'Arménie. Cette association composée d'étudiants en marketing, communication et culture de l'Institut des administrations et des entreprises de Lille 1 organise, chaque année, une manifestation sur un pays différent.

Trois temps forts ont rythmé cette après-midi dans les salles de l'*Univers*, rue Danton à Lille : des contes et légendes par Louise Colimard, la projection d'un film documentaire sur *Trois portraits d'Arméniens* en 2004 par Antoine Chaudagne et un concert de la chanteuse Yerso.

Une exposition était également organisée et mise à disposition par l'association des Arméniens de Montpellier représentée par deux personnes. L'histoire de l'Arménie et ses costumes traditionnels y étaient présentés.

Une petite vingtaine d'Arméniens de la communauté de Lille a assisté à cette manifestation. Le film a été suivi d'un débat avec son auteur qui a expliqué son attachement au pays.

La chanteuse Yerso a interprété d'une voix profonde une quinzaine de chansons traditionnelles et nostalgiques. L'émotion fut au rendez-vous lorsqu'elle interpréta, avec un enregistrement de sa mère aujourd'hui décédée, la chanson *Alagueuz atchered*.

Vous pouvez trouver un CD de ses chansons dans les magasins « Nature et Découverte ». Elle nous a gentiment indiqué à la fin de son spectacle que son fils se produirait avec son groupe de danse *Yeraz* la semaine suivante à Loos.

Louisette et Anna

«Նորդից դեպի աշխարհ»՝ կանգառ Հայաստանում

Սույն թվականի մարտի 18-ին «Պանկուլտուրա» միությունը առաջարկել էր կազմակերպել երեկույթ՝ նվիրված Հայաստանին ։ Այս միությունը, որը կազմված է Լիլ1 համալսարանի Կառավարման և Ձեռներեցության ինստիտուտի մարկետինգի, հաղորդակցության և մշակույթի ֆակուլտետի ուսանողներից, ամեն տարի կազմակերպում է միջոցառում՝ նվիրված աշխարհի որևէ երկրի ։

Օրվա երկրորդ կեսին երեք կարևոր իրադարձություն տեղի ունեցան Լիլի Դանտոնի փողոցի վրա գտնվող «Տիեզերք» սրահում՝ հեքիաթներ և լեգենդներ Լուիզ Կոլիմարի կատարմամբ, Անտուան Շոդանյի 2004 թ. նկարահանած՝ «Երեք հայի դիմանկար» նոր վավերագրական ֆիլմի ցուցադրումը և երգչուհի Եղսոյի համերգը ։

Մոնպելյեի հայկական համայնքը ներկայացնող երկու ներկայացուցիչներ կազմակերպել էին ցուցահանդես, որը նվիրված էր հայոց պատմությանը, ինչպես նաև հայկական ազգային տարազներին ։

Լիլի հայ համայնքի երկու տասնյակ ներկայացուցիչներ մասնակցեցին այդ միջոցառմանը ։ Ֆիլմի ցուցադրումից հետո տեղի ունեցավ հանդիպում և քննարկում հեղինակի հետ, որի ընթացքում նա մեկնաբանեց իր կապվածությունը Հայաստանի հետ ։

Երգչուհի Եղսոն իր գեղեցիկ և հզոր ձայնով հանդես եկավ շուրջ տասնհինգ ազգային ավանդական և կարոտի երգերով ։ Նա խոր հուզմունք ապրեց հատկապես մահացած մայրիկի հետ ձայնագրած՝ « Ալագյոզ աչերդ » երգը կատարելիս ։

Դուք կարող եք այդ երգերի ձայնասկավառակը ձեռք բերել « Nature et Découverte » խանութ-սրահներից ։ Համերգի ավարտին երգչուհին սիրալիրորեն մեզ հայտնեց, որ իր որդին «Երազ» պարային համույթի հետ հաջորդ շաբաթ ելույթ կունենա Լոոս քաղաքում ։

Լուիզեթ և Աննա

Forum des langues de la Chambre de Commerce de Lille

Début mars, la chambre de commerce de Lille a organisé son troisième Forum des langues. Des enseignants, des entreprises, des étudiants, des membres des communautés étrangères vivant dans la région ont été invités à échanger sur leurs pratiques des langues et à participer à des tables rondes. Des temps d'échanges culturels ont aussi été organisés. Dans ce cadre, Arthur et Gnel Gevorguyan et Sarkis Yeritsian ont interprété des chansons traditionnelles arméniennes devant un public qui rencontrait cette culture pour la première fois.

Louisette et Gnel

Լեզուների ֆորում Լիլի Առևտրի պալատում

Մարտ ամսվա սկզբին Լիլի Առևտրի պալատը կազմակերպել էր Լեզուների 3-րդ ֆորումը : Հրավիրված էին մարզի հիմնարկ-ձեռնարկություններիաշխատակիցներ, ուսանողության, այլազգի համայնքների ներկայացուցիչներ, լեզվի մասնագետներ, որոնք լեզուների վերաբերյալ մտքեր փոխանակեցին կլոր սեղանների շուրջ : Հատուկ ուշադրություն էր դարձվել մշա-կութային շփումներին : Այս ծրագրի սահմաններում Արթուր և Գնել Գևորգյանները, Սարգիս Երիցյանը կատարեցին ավանդական հայկական երգեր մի հանդիսատեսի հ անգամ էր հանդիպում հայկական մշակույթի հետ :

Լուիզեթ և Գնել

Semaine de l'Arménie

Du 19 au 23 mars, le service animation de la ville de Loos a consacré une semaine à l'Arménie avec une exposition photographie sur les paysages et les monuments du pays, un atelier de cuisine et la reconstitution de 2 costumes traditionnels.

Cette manifestation s'est conclue par un repas-spectacle arménien préparé par des habitants. Entre les plats, environ 25 d'entre nous se sont régalés de la musique du trio *Azad* composé de 3 musiciens, et des danses de la compagnie *Yeraz*. Les 8 danseurs nous ont donné un aperçu de leur spectacle « Parfums d'Arménie ». Ce spectacle a été donné le 8 mai à l'Olympia et le 10 juin à Aulnay-sous-Bois avec plus de 60 danseurs.

C'est la première création de cette jeune compagnie créée en même temps que l'école de danse du même nom en 2000 à Alfortville. L'école accueille des danseurs de 3 à 71 ans. La Directrice artistique et chorégraphe, Christina Galstian-Agoudjian, a été à Erevan l'élève du grand chorégraphe Azad Gharibian. Elle a été membre du ballet national d'Arménie en 1986 avant d'émigrer en France en 1989. Pour plus d'information sur cette compagnie et pour visionner ses productions, vous pouvez consulter son site internet : http://www.yerazcom.free.fr.

Louisette

Հայաստանի շաբաթ

Մարտի 19-ից մինչև 23-ը Լոսի քաղաքապետարանի մշակութային բաժնի նախաձեռնությամբ անցկացվեց Հայաստանին նվիրված շաբաթ : Ցուցադրվեցին Հայաստանի տեսարժան վայրերը և հուշարձանները պատկերող լուսանկարներ, գործեց հայկական խոհանոցի խմբակը, կարվեցին նաև երկու ազգային տարազներ :

Այս միջոցառումը եզրափակվեց ընթրիք-ներկայացումով, որը կազմակերպել էին տեղի բնակիչները : Հայկական շուրջ 25-հոգիանոց խումբը մեծ բավականությամբ ճաշակեց ուտեստները «Ազատ» երաժշտական եռյակի և «Երազ» պարային համույթի կատարումների ներքո : Լոս ժամանած ութ պարողների ցուցադրած « Հայաստանի բույրերը » ներկայացումը մեծ տպավորություն թողեց : « Երազ »-ի 60 պարողների մասնակցությամբ ներկայացումը ցուցադրվել է նաև մայիսի 8-ին Փարիզի « Օլիմպիա » դահլիճում և հունիսի 10-ին՝ Օլնէ-սու-Բուայում :

Սա 2000 թ. Ալֆորվիլի պարային դպրոցին զուգահեռ ստեղծված այս երիտասարդ համույթի առաջին մեծ ելույթն էր : Դպրոցը համալրված է 3-ից մինչև 71 տարեկան պարողներով : Համույթի գեղարվեստական ղեկավար և պարուսույց Քրիստինա Գալստյան-Ագուջյանը Երևանում եղել է պարարվեստի մեծ վարպետ՝ Ազատ Ղարիբյանի աշակերտը, իսկ 1986 թ.՝ Հայաստանի պարի պետական անսամբլի պարուհիներից էր: Նա Ֆրանսիա է տեղափոխվել 1989 թ. : Այս խմբի և նրա հետագա ծրագրերի մասին ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարող եք ծանոթանալ՝ այցելելով նրա ինտերնետային կայքը՝ http://www.yerazcom.free.fr.

Լուիզեթ

Extraits du spectacle de *Yeraz* à Loos

Դրվագներ « Երազ »-ի ներկայացումից Լոսում

La ville de Wasquehal a également organisé une manifestation à laquelle nous n'avons pas pu nous rendre. Si quelqu'un y a participé merci de nous raconter pour un prochain numéro.

Enfin, dans la salle du Faubourg de Béthune, un repas arménien et des jeux ont été organisés par notamment des habitants arméniens du quartier avec l'appui de la maison de quartier en remerciement pour les bénévoles de l'association des « Restaurants du coeur ».

Louisette

Les prochains rendez-vous

Encore dans le cadre de l'année de l'Arménie, la maison de quartier du Faubourg de Béthune prépare pour l'automne prochain, un repas-spectacle arménien ouvert à tous. Cette manifestation aura pour nous une importance toute particulière parce qu'une partie de la communauté arménienne habite le quartier et qu'au travers d'un comité d'organisation certaines de ces habitantes et l'association *Ararat* sont associées au montage de l'opération. La troupe parisienne *Kotchari* se produira et un repas de cuisine arménienne préparé par les habitants du quartier sera servi. D'autres surprises sont en cours de préparation. L'entrée à la soirée sera payante.

*****

À partir du 30 mai 2007, sera diffusé le film italien *Le mas des alouettes* de Paolo et Vittorio Taviani sur le génocide arménien. C'est l'histoire d'une riche famille arménienne, les Avakian, partagée entre Venise et l'Anatolie, qui à l'occasion de sa réunion, est confrontée au génocide. Ce film est tiré d'un best-seller italien écrit par Antonia Arslan qui est sorti en France sous le titre *Il était une fois en Arménie* aux éditions Robert Laffont.

Ce livre s'inspire de l'histoire réelle de la famille de l'auteur. Le film comporte des scènes violentes qui peuvent choquer.

Louisette

Cuisine

Boulettes au chocolat et au rhum

Ingrédients :
500 gr de cake ou de 4/4 blanc
500 gr de confiture d'abricot (chauffée)
2 cuillères à soupe de rhum
2 cuillères à soupe d'eau chaude
½ verre de cacao
½ verre d'amandes mixées grossièrement
Pour le nappage : 150 gr de chocolat noir, 100 gr de beurre

Préparation :
1. Mélanger le cake mixé, le cacao et la confiture chauffée au micro-onde. Ajouter le rhum et l'eau.
2. Mélanger pour faire une pâte bien agglomérée.
3. Former des boulettes de la taille d'une balle de ping pong.
4. Faire fondre le beurre avec le cacao au micro-onde pour le nappage. Bien mélanger et plonger les boulettes dedans.
5. Mettre au frais 2 à 3 heures.

Tamar

Ուասքալ քաղաքը նույնպես կազմակերպել էր միջոցառում, որին մենք չկարողացանք ներկա գտնվել ։ Եթե որևէ մեկը մասնակցել է այդ միջոցառմանը, խնդրում ենք մեզ պատմել այդ մասին՝ հաջորդ համարում նյութ զետեղելու համար ։

Վերջապես, Ֆոբուր դը Բեթյունի մշակույթի տան դահլիճում տեղի ունեցավ հայկական ընթրիք և կազմակերպվեցին խաղեր տվյալ թաղամասի հայերի և մշակույթի տան համատեղ ջանքերով, որը նվիրված էր « Հոգու ռեստորան » միության կամավորներին ։

Լուիզեթ

Գալիք հանդիպումներ

Այս աշնանը, կրկին Հայաստանի տարվա շրջանակներում, Ֆոբուր դը Բեթյունի մշակույթի տունը կկազմակերպի հայկական ընթրիք-ներկայացում, որին մասնակցելու հրավիրվում են բոլոր ցանկացողները ։ Այս միջոցառումը կարևորվում է նրանով, որ հայկական համայնքի մի մասը բնակվում է տվյալ թաղամասում և նրա որոշ անդամներ «Արարատ» միության հետ պատրաստ են մասնակցելու այս ծրագրին ։ Ելույթ կունենա փարիզյան «Քոչարի» խումբը, ապա կմատուցվեն տեղի բնակիչների պատրաստած հայկական խորտիկներ ։ Պատրաստվում են նաև այլ անակնկալներ ։ Մուտքը կլինի վճարովի ։

*****

2007 թ. մայիսի 30-ից էկրան կբարձրանա հայոց ցեղասպանության մասին պատմող Պաոլո և Վիտորիո Տավիանիների «Արտույտների ագարակը» ֆիլմը, որը հայ մեծահարուստ Ավագյանների ընտանիքի պատմությունն է, որի մի մասը բնակվում է Վենետիկում, իսկ մյուսը՝ Անատոլիայում ։ Ցեղասպանությունը վրա է հասնում այն պահին, երբ ամբողջ ընտանիքը գտնվում է Անատոլիայում ։ Այս ֆիլմը նկարահանվել է իտալացի գրող Անտոնիա Արսլանի « Մի անգամ Հայաստանում » գրքի հիման վրա, որը լույս կտեսնի « Ռոբեր Լաֆոնտ » հրատարակչությունում ։ Այս գիրքը հիմնված է հեղինակի ընտանիքի իրական պատմության վրա ։ Ֆիլմում կան սարսափելի և դաժան տեսարաններ ։

Լուիզեթ

Խոհանոց

Գնդիկներ՝ շոկոլադով և ռոմով

Բաղադրությունը՝
500 գ. որևէ թխվածքի փշրանք
500 գ. ծիրանի մուրաբա (տաքացրած)
2 ճաշի գդալ ռոմ
2 ճաշի գդալ տաք ջուր
1/2 բաժակ կակաո
1/2 բաժակ խոշոր աղացած նուշ
Կրեմ՝ 150 գ. սև շոկոլադ, 100 գ. կարագ

Պատրաստման եղանակը՝
1. Խորը ամանում տաք ջրի մեջ խառնել թխվածքի փշրանքները, կակաոյի փոշին, տաքացված ծիրանի մուրաբան, ռոմը և նուշը ։
2. Հունցել մինչև ստացվի միասեռ խմոր
3. Ստացված խմորից փոքրիկ գնդիկներ պատրաստել
4. Գնդիկները թաթախել հալած կարագի և շոկոլադի մեջ
5. Տեղադրել սառնարանի մեջ (2-3 ժամ)

Թամար

Communications

. La maison de quartier du Faubourg de Béthune va organiser prochainement des cours de français. Toutes les personnes en ayant besoin sont les bienvenues.

. La médiathèque du Faubourg de Béthune envisage d'acheter des livres en arménien pour les lecteurs de cette langue. Dites nous si vous êtes intéressé et faites nous connaître les livres et les auteurs que vous souhaiteriez trouver dans cette bibliothèque.

. Comme vous le constatez, notre journal n'a pas de nom définitif. Nous faisons appel à vos idées. La distribution de ce numéro va se faire directement par différentes personnes qui s'associent à notre démarche : Louciné, Mariam, Anna, Christina, Haïk, Siranouche, Gnel, Louisette et Garik. Il est possible qu'il y ait des oublis ; dans ce cas, pardonnez nous et faites vous connaître.

. C'est un numéro 0, pour poursuivre cette expérience, nous avons besoin que vous nous fassiez des suggestions d'articles sur l'actualité de notre communauté.

Pour tout cela et pour toute autre remarque, vous pouvez nous joindre aux adresses suivantes :
Par mail : aadelille@voila.fr
Par courrier : 4 impasse du clos Ferrer, 59 000, Lille-Fives
Par téléphone : 03.20.05.42.25 ou 03.20.57.45.06

Responsable de publication en Français : Louisette Lamarche
Responsable de publication en arménien : Haïk Ghambarian, Garik Galstyan
Traduction : Haïk, Gnel, Garik

COURS D'ARMÉNIEN

Bulletin de préinscription pour l'année 2007-2008

Nom _____________________ Prénom ________________
Age ____
Adresse ____
____
Niveau de pratique de l'arménien :
Parlé oui □ non □ un peu □
Lu oui □ non □ un peu □
Ecrit oui □ non □ un peu □
Remarques et souhaits : ______________________________
____
____
____
____

Dans le cadre de ces activités, vous autorisez l'association à photographier et filmer votre enfant.

Bulletin à retourner au 4 Impasse du clos Ferrer 59 000 Lille-Fives pour le 31 août au plus tard.

Imprimé par nos soins.
A ne pas jeter sur la voie publique.

Տեղեկություններ

. Ֆոբուր դը Բեթյունի մշակույթի տունը շուտով կկազմակերպի ֆրանսերենի դասընթացներ : Հրավիրվում են բոլոր ցանկացողները :

. Ֆոբուր դը Բեթյունի գրադարանը նախատեսում է ձեռք բերել հայերեն գրքեր : Հետաքրքրվող ընթերցողները կարող են դիմել մեզ՝ նշելով հեղինակներին և ստեղծագործությունները, որոնք նրանք կցանկանային կարդալ :

. Ինչպես դուք նկատեցիք, մեր թերթի անունը կրում է ժամանակավոր բնույթ : Սիրով կլսենք ձեր բոլորի առաջարկությունները : Այս համարի տարածումով կզբաղվեն Լուսինեն, Մարիամը, Աննան, Քրիստինան, Հայկը, Սիրանուշը, Գնելը, Լուիզեթն ու Գարիկը : Այն անձանցից, որոնց անունները նշված չեն այստեղ, հայցում ենք ներողամտությունը :

. Սա թերթի 0 համարն է: Որպեսզի շարունակվի այս մտահղացումը, մենք կարիք ունենք ձեր նոր հոդվածների առաջարկների, որոնք կարտացոլեն մեր համայնքի առօրյա նորությունները:

Այս համարին առնչվող բոլոր դիտողությունները կարող եք մեզ հայտնել հետևյալ հասցեներով՝
Էլեկտրոնային փոստ՝ aadelille@voila.fr
Փոստային հասցե՝ 4 impasse du clos Ferrer, 59 000, Lille-Fives
Հեռախոսներ՝ 03.20.05.42.25 կամ 03.20.57.45.06

Ֆրանսերեն հրատարակչության պատասխանատու՝ Լուիզեթ Լամարշ
Հայերեն հրատարակչության պատասխանատու՝ Հայկ Ղամբարյան, Գարիկ Գալստյան
Թարգմանությունները՝ Հայկի, Գնելի, Գարիկի

ՀԱՅԵՐԵՆԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

2007-2008 ուս. տարվա նախնական գրանցման թերթիկ

Ազգանուն_____________________ Անուն _______________
Տարիքը ____
Հասցեն ____
____
Հայերենի իմացության աստիճանը՝
Խոսում եմ այո □ ոչ □ ոչ բավարար □
Կարդում եմ այո □ ոչ □ ոչ բավարար □
Գրում եմ այո □ ոչ □ ոչ բավարար □
Նշումներ և ցանկություններ _________________________
____
____
____
____

Դուք համաձայն եք, որպեսզի միությունը ուսման ընթացքում լուսանկարի և նկարահանի Ձեր երեխային :

Թերթիկն ուղարկել հետևյալ հասցեով՝ 4 Impasse du clos Ferrer 59 000 Lille Fives, մինչև օգոստոսի 31-ը :

Տպագրված է մեր միջոցներով :
Չգցե՛լ հասարակական վայրերում :